

— Բայց, ըստ Լէոնարտոս, միթէ չարիքը չի յաղթանակեր բարւոյն. վասն զի եթէ շահք միշտ անհակառակ ալ չեն իրարու, ինծի կ'երեւայ որ գոնեա շատ անգամ են. զոր օրինակ՝ տեւրց և գործաւորաց դիպուածին մէջ:

Կը շարունակուի:

ՌԱԲԷ

ՍԱՆ ՄԱՐԻՆՈՅԻ ՀԱՍՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

(Տես էրես 83)

Տիտան լեռան հասարակապետութեան երկրին ընդարձակութիւնն է 16 քառակուսի մղոն, և ծայրը կը հասնի մինչև ՚ի Բիմինի: Իրեն քաղաքացւոց ընդհանուր ժողովքը իրենց լեզուովը կը կոչուի Արիւնկոյ. և միայն կարգէ դուրս դիպուածներուն կ'ընեն այս գումարմունքը, բոլոր ժողովականք հանգրտեամբ կը սղմին իրենց վարչութեան Պալատ ըսուած տան մէջ: Քսան և հինգ տարուրնէ վար եղօղը իրաւունք չունի քուէարկութեան: Տէրութիւնը խառն ընդ ռամկապետականին ազնուապետութիւն է, և կը կազմուի Ա. Գլխաւոր խորհրդարանը 60 անձանցմէ իրենց նախագահ իշխանով, որուն իշխանութիւնը բոլոր կենօքն է: Բ. Փոքր խորհրդարանը, երկու տասան անդամք, որ ամեն տարի կը փոխուին և գրեթէ ծերակոյտ մը կը համարուի կամ Բարձր սենեակ (Camera alta): Գ. Երկու վարիչ-իշխանք վեցամսեայ, զորոնք փոքր խորհրդարանը կ'ընտրէ: Ասոնց յանձնուած է տէրութեան վարչութիւնը, մէկը քաղաքը կը կառավարէ և միւսը գեղը. և ասոնք են Սինեկուր (sine cure) ըսուած, առանց ծանր հոգոց ու աշխատութեան՝ պատուով անուանք ու թոշակաւոր իշխաններ: Գլխաւոր իշխանն է միանգամայն դատաւոր, բայց ըստ օրինաց տեղւոյն օտար պէտք է ըլլայ դատաւորը. և միշտ բժիշկ մ'ալ կայ տէրութեան ծախքով: Տէրութեան եկամուտն է 6000

հռովմէական սիւնտ: Հասարակաց ծախուց մէջ չերեւար զօրաց համար եղած ծախքը. միշտ մնայուն ու հաստատուն զօրքն 40 հոգիէ կը ձևանայ և կէսն ալ երաժիշտքն են: Գաղղիացի լրագիր մը (Moniteur de l'armée) այս խօսքերս կ'ըսէ անոնց զինուորութեան վրայօք. « Իւրաքանչիւր քաղաքացի յարմար զինուց՝ պէտք է ձրի ծառայել հասարակապետութեան՝ կենացը 16 տարուրնէ մինչև 60 տարին: վարիչ-իշխանաց ծառայութեան տակն են 2½ զինուոր, քանի մը սպայք ու սպայապետ մը: Պատերազմի ժամանակ զինուորութիւնը ինն գունդ կը բաժնուի, իւրաքանչիւրը 140 զօրական, սպայքն ալ մէկտեղ առնելով: Տեղակալին աստիճանէն մինչև հազարապետը՝ որ եօթն են՝ այլ և այլ կարգ են 75 սպայից: Այս սպայից շատին պաշտօնը աւելի պատուոյ է, ու Ռոմանիոյ ազնուականքը իրենց սեպհականեցին Ս. Մարինոյի հասարակապետութեան կապուտակ ու սպիտակ հագնելու ձեւ. և այս սպայից զգեստին վրայ գրուած են Գաբրիէլ և Սիմոնէդդի իշխանաց անուանքը, նոյնպէս Պէվիլազքուայ, Պարթուրմէի, Ֆէրրոնի, Բիզգոլմինի, Ստրոծի և ուրիշ մարդիկաց: Ս. Մարինոյի վաղեմի անանունն շատագովմը՝ տեղւոյս բնակչացը մէկուն բերանը այս խօսքերս կը գնէ:

« Հոս մեր մէջը անձնական շահախնդրութիւն ամենեւին չկայ. ամեն մէկուն մտաց զօրութիւնը կ'ուղղի առ բարին հասարակաց. ամենուն կամքը՝ միմիաբանութիւն կը ձևացնէ, ինչպէս բազմութիւն նետից միացեալ կը կազմեն նետից անքակտելի խուրձ մը: Քաղաքացւոյ մը փնասը հասարակաց բոլոր քաղաքացւոց եղած անիրաւութիւն մը կը համարուի, փոխանակ իշխանաց՝ օրէնք կը տիրեն. հոս աղքատութիւնը ընկճեալ չնուաստանար և ոչ ալ հարուստութիւնը զուլ կը վերցնէ: Առաքելութիւնը յարգելի է և մոլութիւնը արհամարհ: Միայն իմաստնոց և զգօնից կը տրուին պաշտօնք, և ոչ թէ չարաց, փառասիրաց, և հետամուտ անձկացող:

ներուն: Գաղաքացիք յամօթոյ նախա-
տանաց աւելի կը վախեն քան յօրի-
նաց. և օրինաց աւելի կ'անսան քան
ճարտասանից. միով բանիւ, իշխանու-
թիւնը սակաւուց է և առաքինեաց
միայն»: Այս խօսքերս թերեւս չափա-
զանցք են. Սան Մարինոյ ալ ինչպէս
ուրիշ տեղ, յիրաւի շատ բարի մարդիկ
կան, չարք ալ պակաս չեն:

Փարիզ դեսպան մը ունին Դոշքս ա-
նունով: Դարձեալ կարգ մը աւապետաց
Սրբոյն Մարինոսի կոչուած, որ է ժա-
պաւէն մը հինգ երկնագոյն զուգահե-
ռական դժերով. արծաթասպիտակ են.
թակայի վրայ, այս նշանադրութեամբս.

Reliquo vos liberos ab utroque homine,
Թողում զձեզ ազատ յերկոցունց իսկ արանց,

սրբոյն Մարինոսի առ իւր ընկերս ուղ-
ղած վերջին խօսքերը, Ոչ վարչութիւն,
ոչ վճիռք, ոչ զլխաւոր ժողովք, ոչ բա-
նակ, ոչ օրէնսդրութիւնք, ոչ մրցա-
նակք պատուոյ և ոչ տէրութեան ներ-
կայացուցիչ, կը պակսի այս փոքրիկ հա-
սարակապետութեան: Չունի միայն ոչ
տպարան, ոչ լրագիր, ոչ գրատուն և
ոչ թղթաբեր և թղթատար մը: Երկու
գիտնականք Տէլֆիքոյ և Պորկէզի կոմ-
սերը Տիտան լեռան վրայ բնտրեցին
իրենց ուսումնական մենարաններն:

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

ԱՌ ՍԻՐՈՂՍ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՅԵՇԱՏԱԿԱՅ

ՅՈՒՇԻԿՔ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՅՈՑ երկահա-
տոր գրութեան յետին թերթերը մամ-
լոյ կնիքը կ'ընդունին որ հայրենա-
սիրաց ընթերցմանը ընծայուին: Այս
գրութեանս մէջ հեղինակին դիտաւո-
րութիւնը մեր հայրենեաց քաղցր և
միանգամայն տրտմալի յիշատակները
արձանագրելն է. և անօգուտ է զուր-
ցել ինչպիսի զգածեալ ոգւով՝ աչաց
առջին կը ջանայ գնելու նկարագրաբար
այն դարերն ու ժամանակները, յորս
փայլեցան մեր նախնի դիւցազունքը,
իրենց գովելի գործոց պանծալի յիշա-

տակը մեզի աւանդելով որ լաւութեան
հետոցը հետևող ըլլանք: Գեղեցիկ կը
նկարագրէ հեղինակը մեր մեծանձն
դիւցազանց հայրենասիրութիւնը, որ
իրենց հայրենեաց աւանդըր ոգւով
չափ ջանացին պաշտպանել, անոնց հա-
մար արհամարհելով փառքը, մեծու-
թիւնը և կեանքն իսկ՝ բարեաց քաղ-
ցրագոյնը: Ուստի և զանոնք նկատելով
հեղինակս իր վերջաբանին մէջ կ'ըսէ.
« Հաւատարիմն Աստուծոյ, և իր ան-
ձին, հաւատարիմ է և հայրենեաց: —
Անհաւատարիմն հայրենեաց՝ չէ հաւա-
տարիմ և իր հոգւոյն և ոչ երկնից: —
Ամենէն սուրբ և ազնիւ գործ և աշխա-
տանք երկրիս վրայ՝ երկնից և հայրե-
նեաց համար եղածներն են »:...

Եւ ազգասէր հայն բարձրաձայն կը
պարծի այդպիսի հայրենասէր դիւցա-
զանց սերունդ ըլլալ. վասն զի անոնց
աւանդած հայրենասէր կայծը իր սըր-
տին մէջ կը զգայ: Անոնք անցան յի-
րաւի, ծածկեցան դարուց հանդերձին
տակը. այլ իրենց աննկուն ոգին դեռ
ևս ամենայն հայ սիրտ կը բորբոքէ, և
աճիւնացեալ ոսկերքը կը խրախուսեն
զմեզ, իրենց որդիքը, օրինակ տալ աշ-
խարհի որ չենք ուրացեալ անոնց փա-
ռաց շաւիղը, անոնց հայրենասէր ոգին:

Կը յուսանք որ այս հեղինակու-
թեանս հրատարակումը ընելով՝ հաճոյ
բան մը ըրած կ'ըլլանք հայրենական
աւանդութեանց պաշտպան ազգասի-
րաց. ուստի և այսու վստահութեամբ
իրը ճաշակ մը կը հրատարակենք հոս
հեղինակին վերջաբանը:

Վերջաբանս առ Հայկակ:

Ահա վերջին խորոյկն է՝ որ կու միայ մեր հայ-
րենական հակմանց վառարանին անկիւնը, ու շտա-
կակ. և այս ճաթառող ու վառվառուն մախրիքս՝
վաղը առտու պիտի գտուն ջուրս մոխրիք. և
այնպէս միան, մինչև որ տարւոյն երեք եղանակ-
ներն ալ դառնան լրանան, և նորէն գայ չորրորդն:
Եւ երբ նորէն դառնայ գայ այս եղանակս, ար-
դեօք մենք ալ նորէն պիտի գտնենք զերար՝ մեր
վառարանին քով:...

Ահա գարնանաբեր լուսինն նորարծարծ ճա-
ռագայթներն՝ պատուհանաց ապակիներէն ներս
ցայտելով, կու հրաւիրեն զմեզ բանալ փական.